**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**

**ՄԱՐԶՊԵՏ**

<<30>> << մայիս >> 2016 թ
ք. Եղեգնաձոր

N 54

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի » 34-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի մայիսի 26-ի գրությունը և Ստեփան Ստեփանյանի հետ կնքած 2016 թվականի մարտի 29-ի N295 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Ստեփան Ստեփանյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2016 թվականի մայիսի 30-ից Ստեփան Ստեփանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2.Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ